

ՅԵՅՏԵՐԵՐ ԳԻՐ ԼՐՈՅ

ՄԵԾԻ ՏԵՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԵՆԵԱՆ

ԳՈՐԾՎ ՆԵՐՎԻՆ

Այս համար խնամակալին որ ընդ երկայն առուրս կացցէ, շապան ամսոյն 26 ին երեքշաբթի օրը բարեբաստիկ դուստր մի ծնաւ, որուն անունը Նէյ-իրէ սուրբան դրովեցաւ:

Ուստի Նորին Վեհափառութիւն՝ այս աւետաւոր լուրը ծանուցանելու ու իւր բոլոր նախարարները ուրախացնելու մտօք՝ Եպարքոսին արքայա կանգիր (խաղաղի հիւսկուն) խրկեց, որ արգարութեան վճռոց բարձրագոյն ժողովոյն մէջ բոլորին ներկայութեանը կարգադրելով՝ բարեմաղթութիւններ եղան:

Եւ այս ուրախութեան արքայանիստ քաղաքը բնակողներն ալ մասնակից ըլլալու գիտաւորութեամբ՝ երեք օր թնդանթ նետովելով, և գիշերներն ալ պէտք եղած տեղերուն առաջքը կանթեղներ վառվելով տօնանմա եղաւ: և յիշեալ արքայական գրին օրինակն ալ այժմ ներքեւ տրպմեցաւ:

Իմ հաւատարիմ Եպարքոս: Եւրբիչը՝ այս երկուշաբթի օրը մեր ինքնակալութիւնը բարեբաստիկ դուստր մի շնորհէց, որուն անունը Նէյիրէ սուրբան դրոյ: ուստի թէ քեզի և թէ տէրութեան բոլոր անձինքներուն տւեալս տալու մտօք՝ այս արքայական գիրը գրեցի ու քու կողմից խրկեցի:

Եւ այս նորոգեալ բարեբաստութիւն անոր կենացը երկարութիւն շնորհէ, որուն ծննդեամբն ալ թէ մեր Վեհափառութիւնը և թէ բոլոր հասարակութիւնը երջանկութեան մէջ պահէ, ամէն:

Եւ այս ուրախութեան բոլորն ալ մասնակից ըլլալու համար, պէտք եղած տեղերուն պատուիրէս, որ երեք օր՝ օրը հնգական անգամ թնդանթ նետովելով, և գիշերներն ալ կանթեղներ վառելով ուրախութիւն ընեն:

Յիմաւական ցըրտերը օր ըստ օրէ մօտենալուն համար՝ Վեհափառ Արքայն Պէշեքթաշի ծովեղէրեայ պալատը

տեղափոխելու կամք ընելով, շապան ամսոյն 10 ին կիրակի օրը մեծաւ փառօք նոյն տեղը գնաց, և ինչպէս որ սովորութիւն է՝ բոլոր երևելի նախարարները շնորհաւորութեան երթալու համար՝ Նորին բարձու հրամանաւը լիքեալի հանդէս ալ ըլլալով, նոյն ամսոյն 14 ին հինգշաբթի օրը՝ Եպարքոսը՝ Դենպետը և միւս աւագ նախարարները արքունի ապարանքը գացին, և Նորին Վեհափառութե գեմը ներկայանալով շնորհաւորութեան պարտքը կատարեցին:

Եւ այս խնամակալ Արքայն ալ պէտք եղած գթութե նշանները անոնց ցոյց տալէն յետոյ՝ տէրութեանը կարգադրական գործքերուն քաջ նկատելու համար պատուէրներ ալ տրվաւ: և յետ այնորիկ սոյն յիշեալ անձինքը՝ ուրախութեամբ մեծաւ ետ դարձան:

Եւ ինչպէս յառաջ Թագաւորին հրամանաւը՝ արքայական յատուկ ձիաւոր ու հետեակ զօրքերը իւսկիւտար ֆէնէր պալատին դռանին մէջ աթիշ թալիմի ըսված կրթութիւնը գործի դրեր էին: և Նորին Վեհափառութիւնն ալ՝ յիշեալ զօրաց ճարտարութիւնը ու հմտութիւնը տեսնալով շատ հաւանութիւն ցոյց տրվել էր հանդերձ գովութեամբ, ինչպէս որ յառաջները տրված Լըրոյ դրին մէջ ալ յիշվեցաւ:

Որովհետեւ անոնց վերակացու դրոշմը մեծարու Րիզա փաշային բարեջանութեամբ անոնք այսչափ քաջ կրթութիւն սորված են: նոյն պատճառաւ Արքայն ալ՝ նոյն փաշային վրայ ունեցած սովորական գովութ աւելցընելով, այս բարեջանութեանը փոխաբէն խաղաղ սուր մը շնորհէց: և յիշեալ զօրացը ֆէրիգ գրանդիդ յարգի Րէշիտ փաշային ալ ըրած աշխատանացը փոխարէն՝ նմանապէս խաղաղ սուր մըն ալ անոր պարգեւեց:

Եւ արքութեան վճռոց բարձրագոյն ժողովոյն կարգադրութեանը հաստատութիւն տրված տոներ՝ նոյն տեղին անդամներէն Էօմէր ճէմալ էֆէն

տիին փոխվելը հարկաւորելով, հըրամանաւ Արքային արքունի ծովափալ փաշային հետ Վրէտէ խրքիւղել էր: որ այժմ իր պաշտօնատարութիւնը կատարելով արքայանիստ քաղաքը գաւառաւուն և ինքն ալ ի բնէ մտացի և հաւատարիմ անձ մը ըլլալուն համար, տաւիլի նազըրին երկրորդ քարտուղարութիւնը յանձնըվեցաւ:

Եւ երկրորդ քարտուղար գըտնըվող հաճի Գէշաֆ էֆէնտին ալ աշխատաւոր և հմտ ըլլալով հիմնական պարագայ չը կենալու համար, Վրէտէյի և Էրզըրումի միւշի գըտնըվող փաշաներուն խափու քէթիւնատասիյութիւնները տրվեցան:

Թոփթանայի նախկին նազըր Արիֆ Գէքի էֆէնտին ալ շալէպի Բեքթիւն ու Թոնուսի միւշիլին խափու քէթիւնատասիյութիւնները յանձնըվեցան:

Եւ Երզըրումի ֆէրիգ ճըֆի փաշային խափու քէթիւնատասիյութիւնը, մալիյէի նախկին մէքթիւպաշի Սաթիկ պէյ էֆէնտին ալ Տիյար պէքի գաւառին միւշիլ Զեքէրիյա փաշային խափու քէթիւնատասիյութիւնը, այս յիշեալ անձանց շնորհվեցաւ:

Եւ երեւոյ կղզին մէջ պատահած խրքութեանը ժամանակը՝ Թագաւորա կան կրթեալ զօրքերուն հետ նոյն տեղը խրքիւղող միւրի լիվա Մահմաւ փաշային՝ ֆէրիգութիւն: Եւ նոյն կղզին միւշիլ Մուսթաֆա փաշային տղին Վէլի էտտին պէյին՝ որ անցեալները միւրաւայութիւն տրվեցաւ, հիմա ալ միւրի լիվայութիւն: Եւ Բաթաճիգ զօրաց առաջին թափօրին ու Մարաշի Րէտիֆ զօրացը երրորդ հազարապետ գըտնըվող Ալի փաշային ու Մէհմէտ սոլային ալ՝ կրթեալ զօրաց տեղապահութիւն: Եւ յիշեալ միւշիլին միւս որդեւոցը՝ Ապալիւ քէրիմ պէյին ու Հասան պէյին՝ նաեւ իրեն դիւանադպիրը Խօճէկեան Ադա պէյին ալ՝ Եպարքոսի մէքթիւպաշիյութեան իրւեքայութիւն: Եւ սոյն պէյին աներձակը Հասնայի ժողովոյն տեսուչ Ապալիւ հալիմ պէյին՝ խափու ճիշդալիլութիւն:

Եւ յա արժանաւոր անձինքներուն:

յիշեալ աստիճանները ու պաշտօնատա-
րութիւնները շնորհիւ լինելու՝ վերջգլոր
եալ փաշան խնդիրք ըրաւ : Եւ արքու-
նի ծովակալ Դաճիկ փաշային կողմա-
նէ ալ՝ անոնց արժանաւորութեանցը
վկայութիւն տրուելով, այժմ նոյն խն-
դիրքը հրամանաւ Արքային կատարուե-
ցաւ :

Բարեկենսամ ինքնակալին իւր բոլոր
քաղաքացիք այս ունեցած բարի դիտա-
ւորութիւնը և մանաւանդ հպատակաց
համար յանձն առած քաղցր խնամա-
կալութիւնը՝ այժմեան Գամասկոսի բը-
դէշի մեծարու հաճի Նէճիկ փաշային
կառավարութեան ներքեւ գըտնելով
բնակիչներուն ալ հրատարակելու մոտ
հրամանագրեր (պուրուլթիւներ) խը-
ղովեցան :

Եւ յիշեալ փաշան ալ լաւ կառավա-
րելու պէտք եղած խոհանութիւնները
գործածելով՝ նոյն տեղի բոլոր բնակիչ
ները՝ այս արքայական գլխութիւններուն
վրայ ուրախացեր, և Նորին Վեհափա-
ռութեանը համար բարեմաղթութիւն
ներ ընելով, երեւելիները՝ շէյխերը ու
գլխաւորները այս անգամ շնորհակա-
լութեան գրեր արքայանիստ քաղաքը
յուղարկեցին :

Աստի խնամակալ Թագաւորը աս-
տիք իմանալով շատ ուրախացաւ, և
յիշեալ փաշային ալ՝ բարեջանութիւն
ըրած խոհան կառավարութիւնը ևս
ընելով հաւանեցաւ ու գովեց զանիկա :

Կալ կը յուսամք որ Աստուծոյ ան
հուն նախախնամութեամբ և ինքնա-
կալին բարեբաղդութեամբ ինչպէս
որ մինչև ցայժմ՝ նոյնպէս ալ այսուհետեւ
Աստուծոյ անհատական բնակող բոլոր ժողո-
վուրդները հանգստութեան ու անդոր-
րութեան մէջ մնալով, Նորին Վեհափա-
ռութեան հովանաւորութեանը ներքեւ
խաղաղ ու ապահով կեանք կը վարեն :

Փարէղի դեսպան ընտրուող մեծա-
րու Բէշի փաշան շապան ամսոյն 13ին
չորեքշաբթի օրը արքունի ապարանքը
կանչուեցաւ, և ինքնակալին դէմը ներ-
կայանալով ու ըստ կանոնի մնաք բարե-
եաւ ըսելով խոնարհութիւն ընելէն յե-
տոյ՝ ետ դարձաւ : և նոյն ամսոյն 22 ին
ուրբաթ օրը պատրաստեալ շոգենաւը
հեծաւ, ու Մարտիէս երթալու ճամ-
բայով իր պաշտօնատարութեան կող-
մը գնաց :

Յիշեալ դեսպանին քովը գըտնե-
լով առաջին և երկրորդ խորհրդադը-
պիւր (սլը քեաթիւլի) Նէճիկ ու Պա-

հիր Էֆէնտիներն ալ՝ այս շապան ամ-
սոյն 20 ին չորեքշաբթի օրը արքունի ա-
պարանքը կանչուեցան, ու ինքնակալին
դէմը ներկայանալով փառաւորվել-
նուն յետոյ ետ դարձան :

Որովհետեւ արդարութեան վճռոյ
ժողովոյն անդամները՝ իրենց նոյն պաշ-
տօնը յանձնելով՝ ատենը՝ ինքնակա-
լին դէմը կը ներկայանան : ապա փա-
րէղի նախկին դեսպան Նորին Էֆէն-
տիներն ալ՝ որ նոյն ժողովոյն անդամ ընտ-
րուել էր, այժմ արքայանիստ քաղա-
քը գալով, ըստ կանոնի յիշեալ ամսոյն
18 ին երկուշաբթի օրը արքունի ա-
պարանքը կանչուեցաւ, և Արքային
դէմը ներկայանալով փառաւորվեցաւ :

Մէքքէյի ու Մէտինէի գաւառ-
ներուն պաշտօնատար գըրվող Ահմէտ
փաշան որ արքայական հրամանաւ իրեն
Ֆէրիգութեան աստիճանն ալ շնորհ-
վել էր, այս օրերս Գամասկոս երթա-
լու կը պատրաստուի : Կալ հիմա ալ
Նորին բարձու հրամանաւը շապան
ամսոյն 18 ին երկուշաբթի օրը ար-
քունի ապարանքը կանչուեցաւ, և
ինքնակալին դէմը ներկայանալով փա-
ռաւորվեցաւ :

Մէքքէի գլխաւոր շէրիֆ Մե-
հմէտին դիւանագրայիւր Նիւսէյին
Էֆէնտի որ նոյն շէրիֆին կողմանէ
յառկապէս ինքնակալին համար ըն-
ծալով՝ ձիերը բերեր էր, և այն ժա-
մանտին ալ Նորին Վեհափառութիւն
կողմանէ յիշեալ Էֆէնտիին խօսե-
կեանութեւ աստիճանը շնորհվել էր :
Ինչպէս որ ասկէց յառաջ տըպւած Լը-
րոյ գրին մէջ ալ յիշվեցաւ : Աստի
հիմա ալ Արքային հրամանաւը նըշան
մըն ալ տրուելով, ուրախութեամբ
իւր տեղը գնաց :

Բերեաղի խափուճի պաշիններէն
Քեաշիֆ Էօմէր պէյին աշխատաւոր
գըտնելու համար՝ հրամանաւ Թա-
գաւորին արքունի ախոռի աստիճանը
ու միանգամայն նոյն աստիճանին յատ-
կացեալ նշանը շնորհվեցաւ :

Տէյար պէրիւր խանէտաններէն
Մէհմէտ պէյին ասկէց յառաջ ար-
քայական կողմանէ Թէպէտ արքունի
ախոռի աստիճանը շնորհված էր, բայց
նոյն աստիճանին յատկացեալ նշանը
տրուած չէր : Աստի այս անգամ նը-

շանն ալ շնորհվելուն՝ Տէյար պէրիւր
միւշիւր Չեքէրիյա փաշային կողմանէ
խնդիրք եղաւ, որուն խնդիրքը կա-
տարվելուն վեհափառ Արքային հրաման
ընելով՝ այժմ՝ զարպիսանէն կը շինվի
նոյն նշանը :

Գամասկոսի համարակալ Էնվերի
Էֆէնտիին քովը գըտնելով Գուրպի
Էֆէնտիին ու իզդէթ Էֆէնտիին ար-
ժանաւոր գըտնելուն համար, հը-
րամանաւ ինքնակալին խօսեկեանուե-
նալ աստիճաններ շնորհվելով՝ հարկադը-
եալ վկայականները խըղովեցան :

Արքայանիստ քաղաքը գըտնելով
Անգղիայի դեսպան Լուս փոստիւր
արժանապարգ անձը իր երկիրը դառ-
նալու իւր տերութեանը կողմանէ հը-
րաման եղեր էր : ուստի ինչպէս որ
սովորութիւն է՝ հրամանաւ Արքային
այս շապան ամսոյն 12 ին երեքշաբթի
օրը արքունի ապարանքը բերվեցաւ :
և արտաքին իրաց վերակացու Ռիֆաթ
փաշային հետ Նորին Վեհափառութե-
անը դէմ ներկայացաւ, որուն կող-
մանէ ալ բարեկամական և սիրոյ նըշան
ներ տեսնալէն յետոյ ետ դարձաւ : և
նոյն ամսոյն 24 ին կիրակի օրը շոգե-
նաւով իւր տերութեւ կողմը գնաց :

Արքայանիստ քաղաքը կեցող
Գոնթ տիւ փոթիւ Գաղղիայի տե-
րութեան դեսպանը՝ որոշեալ ժամա-
նակաւ Գաղղիա երթալու իւր տերու-
թեանէն հրաման առեր էր : Սէրքիշ-
եալ Լուս փոստիւրի Անգղիայի տե-
րութեան դեսպանին ալ հոս չը գըտ-
նելով՝ ժամանակը՝ Մօսէօ Շարէլ
պանքա դեսպանի խորհրդադպիւրը ե-
րեսփոխան (միւրէխխա) ընտրվելով
նոյն տերութեանը կողմանէ սովորա-
կան գիր մըն ալ ինքնակալին խըղ-
վել էր :

Աստի ինչպէս որ սովորութիւն է՝
շապան ամսոյն 30 ին շաբաթ օրը՝ յիշ-
եալ դեսպանը ժամը վեցին, և նոյն
երեսփոխանն ալ՝ ժամը ութին ար-
քունի ապարանքը կանչուեցան, և ար-
տաքին իրաց կառավարչին ներկայ
գըտնելով՝ ժամանակը՝ ի միասին Ար-
քային դէմը ներկայացան :

Թագաւորանիստ քաղաքը կեցող
Գոնթ Գիւնէզմարգ Պրուշի տերու-
թեան դեսպանը այս ձըմեւը՝ Պէրլին
մայրաքաղաքը անցնելու համար, իւր
տերութեւ հրամանաւ պիտի երթայ :

Այսպիսով սովորական կերպով շապա-
տանց 19 ին երեքշաբթի օրը՝ արտա-
քին իրաց կառավարիչին հետ՝ Նորին
վեհափառութեան դեմը ներկայա-
ցաւ . և որովհետեւ յիշեալ տերութեան
հետ՝ Օսմանեան բարձու տերութիւնը
բարեկամական կապով միշտ կապված
է, նոյն պատճառաւ յիշեալ դեսպանն
ալ՝ Արքայէն շատ յարգանք տեսնալով
ուրախութեամբ իր տեղը գնաց :

Հայոց ազգին վերաբերեալ ամեն
պատահած ծախքերը՝ և թէ ազգային
բոլոր գործառնութիւնը՝ իսկզբանէ
անտի Պատրիարքարանի գիտութեամբ
և ազգի գլխաւոր անձանց տեսչու-
թեամբ թէ և ի գործ կը դրուէր .
բայց անցեալները ազգին խնդրանքը
այնպիսի ծախքերուն հոգաբարձու-
թեանը համար՝ քսան և չորս վերակա-
ցու դրովելուն հրաման տրուեցաւ :
Որոնք ալ միայն ազգային ծախքը հո-
գալը իրենց բաւական չի համարելով,
ազգին ընդհանուր կառավարութեան
ու Պատրիարքին իշխանութեան սեպ-
հական եղած գործքերուն ալ խառնը-
վելու համարձակեցան . և մէկ քանի
գրգռիչներուն գրգռմամբ շատ մը ան-
պարկէշտ մարդիկ ալ տերութեան բարձ-
րագոյն դուռը գալով՝ լրբութեամբ
անպատշաճ խնդիրքներ ըրին :

Կա այժմեան արգարութեան կա-
նանին պահանջմամբ՝ երկու կողմնալ
թէ եպարքոսին ներկայութեանը և
թէ արգարութեան վճռոց ժողովոյն
և թէ վաճառականութեան ժողովոյն
մէջ խօսեցնել տալով՝ որքան որ հարց
ու փորձ եղաւ, վերջապէս անոնց այս
կերպով անվայելուչ գործքը՝ իրենց
մէջէն ութը կամ տասը գլխաւորիչ-
ներուն գրգռեցն յառաջ գալը յայտնի
եղաւ :

Բայց որով Օսմանեան բարձր տե-
րութիւնը մանաւանդ այժմեան մեր
խնամակալ Թաղաւորը՝ որ ընդ հան-
րապէս իրեն հպատակ գլխաւորութե-
րուն հանգստութիւնը կը կամի . սակայն
այս հանգստութիւնը ըստ ծնին ալ ժո-
ղովուրդին մէջ աղմուկ ձգող ու ա-
նոնց անգործութիւնը աւերող մար-
դիկները պատժելով ձեռք կը բերվի :

Եւ ինչպէս որ վերը յիշեցինք՝
ու թէ տասը մարդկանց վրայ՝ երկար
բարակ քննութիւնը ըլլալով՝ անոնց
գրգռիչ ըլլալին անտարակոյս յայտ-
նըվելուն պատճառաւ, տերութեան
հրամանաւ զանոնք մէկ մէկ տեղ աք-
սորվեցան :

Եւ Ստեփան Պատրիարքը թէ և
հաւատարիմ անձ մը գլխաւորած էր,
բայց ծերութիւնն ունենալով՝ ազգը
լաւ կառավարելու կարող չըլլալուն
համար՝ անոր փոխելուն, և Աստ-
ուածատուր Արքեպիսկոպոսը՝ բնա-
կան ուշիմ ու խոհեմ և մանաւանդ թէ
յառաջ և թէ այժմ Պատրիարքութեան
արժանաւոր գլխաւորութեան պատճա-
ռաւ, ազգի գլխաւորներուն ընտրու-
թեամբը՝ և վսեմափառ Թաղաւորին
բարձու հրամանաւ՝ անոր տեղը
Հայոց ազգին Պատրիարք կարգեցաւ :

Որովհետեւ մեր խաղաղասէր Ինք-
նակալին միտքը իրեն հպատակ ազգե-
րը միշտ պաշտպանելն է . ուստի Հայոց
ազգի հասարակութիւնը՝ ինչպէս որ
կը բողոքէր, և թէ նոյն ազգի գլխա-
ւորներուն հետ յիշաւի հիսապ ու
առնելիք ունինէ, արգարութեան վճռ-
ոց ժողովոյն մէջ ստուգվելով՝ նոյն
ժողովոյն մեծամեծները՝ յիշեալ գլ-
խաւորներուն ամբողջ հատուցանել
պիտի տան հասարակութեանը առնե-
լիքը . բայց եթէ հասարակութեան
հիսապը ու առնելիքը՝ ժողովոյն մէջ
չի հաստատվի, ազգին մէջէն խօսք ու
գանգատը բարձրվի :

Արեւմտեան ահա այս կռիւին ու
տրտունջին հիմը և արմատը եղած հի-
սապի ու առնելիքի գործքն ալ արգա-
րութեամբ տեսնուելուն համար՝ վե-
հափառ Արքայն վերջիշեալ ժողովոյն
յանձնեց . որ այժմ համարառուները
(հիսապ առնողները) իրենց փոխանորդ
(վերիլ) կացուցանելով՝ վերջիշեալ
ժողովը երթալուն համար՝ Պատրի-
արքարանին իմացումն տրուեցաւ :

Արեւմտեան ազգին հասարակութիւնը՝
Թաղաւորին այժմ այս կերպ գլխու-
թիւնները վայելելով, պէտք է որ շը-
նորհակալ ըլլայ, և պատժոյ արժանի
գործքերէն ալ հեռանայ :

ԳՐԱԴԱՐԱՆ ԵՐԵՎԱՆԻ

Պէտքէի հաշտութիւն անհնաժող
հանգիստ-պոլիս արդար՝ հաճեցին օրա-
գլխէն հանրապետ Լուսինն էն :

Պատրիարքը՝ Չինացոց դրոշմին
էն . որոնք մեծ ու փոքր քանի մը գա-
ւառներ ունին, որոնց շրջապատը ծով
է կղզի նման . շատ տաք կը լըստ ամա-
ռը, ու ձմեռն ալ խիստ ցուրտ, նաեւ
վտարիկ ու անձրեւ ալ շատ կը պատա-
հի, օդը՝ քաղցր է, ու հոգն ալ բարե-

բեր . բոլոր բնակիչները 30 միլիոնէն
աւելի են :

Նիֆոն ըստ զաւառին մէջ էէ
տօ անուն մայրաքաղաքին բնակիչքը՝
մէկ միլիոն ու չորս հարիւր հազար հո-
գի են : Երկու Թաղաւոր ունին, մէ-
կը՝ Տաեհրի կըսվի, որ իրենց կրօնքին
վերաբերեալ գործքերուն կիշխէ . միւ-
սը՝ Սէյուդուն կը կոչվի, որ տերութեան
կառավարութիւնը անոր յանձնըված է :

Նոյն մայրաքաղաքին մէջ 6000 կը
աւտուեն և 130 խիստ մեծաշէն ու գե-
ղեցիկ արքայական պալատներ կան, ու-
րոնց ամեն մէկին քիւլը (սալախը) վի-
շապաձե ու ոսկեղօծ, և դռներն ոս-
կեղէն, և մէջն ալ ոսկեթելով փախ-
աթներ (խախներ) փրուված են : Նոյն
տուները այնպէս մէքենաւոր (վիտալը)
չինված են, որ երբ կը կամին՝ իսկոյն
կը քակեն ու վերստին կը կազմեն :

Թաղաւոր անոնց նախկին իսկ Թաղա-
ւորը՝ Տաեհրին էր, բայց այն ալ քա-
նի մը հարիւր տարի է որ մի միայն կը-
րօնքի վերաբերեալ բաներուն կը խառ-
նըվի . որոնց կրօնքը առ հասարակ կը-
ռապաշտութիւն է, և այն ալ երեք
կերպ է :

Պաղօտա ըստ մեծ կռատանը մէջ
333333 կուռք կան . և անոնց մէջը
ամենէն մեծ կուռք մը կայ, որուն ձեռ-
քին մէջը միայն՝ վեց մարդ կրնայ նըս-
տիլ . և անոր մէջն ալ այնքան շատ ոսկի
ու արծաթ կայ, որոնց գինը վար չինջ
նստու համար՝ բաց ի արքունական կող-
մանէ յատկացեալ մարդիկներէն այ-
լոց հրաման չիկայ անկէց ոսկի և ար-
ծաթ հանելու :

Նախաջիշեալ Տաեհրի ըստ Թա-
ղաւորին պալատը ու պարտէզները բեր-
դի մը մէջ են . և անոր դրօսի կողմն ալ
նախարարներուն ու աշխուհաններուն
օթեանքը (խօնախները) չինված են,
որոնց շրջապատն ալ բերդի նման է :

Եւ այս բերդին ալ դրօսի կողմը ըն-
դարձակ ու խորունկ խրամ (խանադ)
փրված ու ջրով լեցված է : Ոյն տե-
րութեան առ հասարակ պաշտօնատար
անձինքը՝ մէջքերին մէկ մէկ թուր,
սակայն աղնուականները՝ ի նշան ազ-
նուականութեան իւրեանց երկերկու
թուր կը կապեն :

Բայց սովորութեան իւրեանց եթէ
մարդ մը ընդդէմ տերութեան յան-
ցանք գործէ, իւր ընտանեացը վնաս չի
գալու համար՝ փորը գանակ մը խօթե-
լով ինքը զինքը կը մեռցնէ . քանզի
եթէ այսպէս չընէ, իւր ընտանիքներն
ալ տերութեանը կողմանէ վնաս կը
կրեն իրեն յանցանացը համար :

Ինչպէս որ օտար տերութեանց նա-
ւերուն նոյն տեղը երթալը խիստ ար-
գելումն (եւտալն) եղած առնելը առ-

կէց տասն և հինգ Կամ քսան տարիի չափ յառաջ՝ Անգղիայի տէրութեանը մէկ նաւը հոն երթալով բռնութեամբ նաւահանգիստը մտնելուն համար, այս արգելմանը վերակացու գլխաւորութեամբ իրենց տէրութեանը արգելումը յառաջ տանելու Կարող չըլլալով՝ զի բերք յանցանաւոր համարեր ու ինքը ղինքնին ըստմաներ են։ Որ այս բանըս Անգղիայի նաւաւարները տեսնալով զարմացեր ու այն նաւահանգստէն հեռացեր ու այնուհետեւ անգամ մըն ալ չեն գացեր։ Իսկ միայն Նաղաստքի ըսված նաւահանգիստը՝ Չինացի ու ֆիլիպինի վաճառականները կրնան մեր ձեռնալ, և անոր կից փոքր կղզի մը կայ, ուր տեղ ֆիլիպինցիներէն ուղղը հոն կրնայ նստիլ։ Որուն ցամաքային կողմը դուռ մը ըլլալով՝ ցերեկները ղինուոր կը պահպանէ, ու գիշերները դուռը կը դոցեն։

Երեք տարին անգամ մը դեսպանութեամբ ֆիլիպինցիներ մարդ մը կերթայ Եթոս մայրաքաղաքը, ուր տեղ Սէյուդուն կոչված Թագաւորին հետ տեսութիւն կընէ։ Իսկ ճանբայէն անցած ժամանակը՝ ճանբուն երկու կողմը ղինուոր կը կանգնի, որուն մէջէն կանցնի կերթայ նոյն դեսպանը, և ուր տեղ ցոյց տան, միայն այն տեղը կրնայ բնակիլ, վասն զի ուղած տեղը երթալու Կամ քաղաքը շրջապայելու խիստ արգելումն եղած է։ Այլ միայն ճանբայէն անցած ժամանակը՝ ինչ որ տեսնայնէ՝ այն է, ուրիշ բանի տեղէկանալու ամենեւին կարող չէ։

Սոյն տէրութիւնը 120000 ղինուոր ունի, ու ուրիշ տէրութենէ ամենեւին երկիւղ չունենալով՝ բնաւ նաւատորմիլ (տոնանմա) ալ չունի։ Իսկ ազգը ամենեւին առուտորի մէջ զերար չի խաբէր, վասն զի ասոնց մէջը ստուծիւն չի կայ, ու ճշմարտութեամբ է ամենէն խօսքերնին։

Ֆիլիպինցիները՝ ասոնց կը տանին Կաւաեղէն լաթ, չուխա, փղոսկր, ու ուրիշ ասոնց նման բաներ, որոնց փոխարէնը՝ անոնցմէ կառնեն ոսկի, արծաթ, պղինձ, արծաթ, չայ, աղնիւ յախճապակի (Փառֆուրի) ու անուշաճոտ իւղեր։

Իսկ կղզիներուն մէջ ամենէն բան կը գըտնուի, մանաւանդ Կարմիր ու ճերմակ մարգրիտ, որոնց գները հաւասար են իրենց մէջը։ Իմեն կերպ ուսմունքի համար՝ դպրատուններ ունին, և գիրք տպագրելու տպարան ալ կայ, ու մէկ հատ ալ օրագիր (խաղէթա) կը տըպիլ։

Արշալիշեալ մայրաքաղաքին մէջը գետ մը կայ, որուն վրայ գեղեցիկ կառուցը (բեօփրիւ) մը շինված, ու բո-

լորտիքը ոսկեղօծ փարմախըններով զարդարված է. որուն ճակատը գըրված է իւրաքանչիւր գիւղ ու գիւղաքաղաք իրարմէ որքան հեռաւորութիւն ունենալը, և ճամբըներն ալ վեր վայր չեն, այլ հարթ ու շիտակ շինված են, ամառը՝ զովութեան համար ամենէն օր գետինը կոռոգանեն. երեւելի գործարաններ (Փապրեգաներ) ալ ունին։

Իսկ մէջ գողը փէք քիչ է. վն զի ամենէն մէկ փողոցը՝ Եթաւան տունով բաժնրված, և անոնց բոլորին ալ դուռ շինված ու պահպաններ ալ դըրված է. որ եթէ տուն մը գող մանէ, հարկաւ կիմացվի ու կը բռնուի. և մանաւանդ՝ այս կղզիներուն մէջ խիստ գետնաշարժութիւ պատահելուն համար՝ պալատները ու բնակարանները միայտիկ (մէկ խաթ) շինված ըլլալով, շատ դժուարաւ կրնայ պահպանվիլ մէկ գող մը։

Հին ժամանակները՝ օտար տէրութեանց նաւը այն տեղը կրնար երթալ, նոյն պատճառաւ ֆօթութագալի կողմանէ վարդապետներ գացին բնակեցան, ու շատ մարդ քրիստոնեայ ըրին։ Իսկ երբ Տաեթի ըսված Թագաւորը իմացաւ, ասկէց 258 տարի յառաջ բոլորն ալ ըսպաննրվելու հրաման ըրաւ, որ 20000 քրիստոնեայք նահատակ եղան, ու շատերն ալ փախչելով պահպանվեցան, որոնցմէ վերստին քրիստոնէութիւնը ծաղկեցաւ. սակայն յիշեալ ժամանակագրութենէն 49 տարի յետոյ՝ վերստին սպանման հրաման ընելով, 37000 քրիստոնեայք ալ այն ժամանակը նահատակվեցան, որ անկէց ՚ի վեր է քրիստոնեայ եղող չի կայ մէջերնին։

Մինչև 1500 տարիէն ՚ի վեր սոյն տէրութեան ըսկըզնաւորութիւն ժամանակագրութիւնը կայ, բայց անկէց ալ որչափ յառաջ ըլլալը չենք գիտեր. և եկամտան ալ մինչև 8200000 քրսակի չափ կայ։

Արշալիշեալ ճաբոնացիք ուժեղ ու հանճարեղ ազգ մը ըլլալով աւելի կարգ ու կանոն կը պահպանեն, և իրենց տէրութեանը կարգադրութիւններն ալ հիմնաւի կերպ մի են, ինչպէս որ տեղեակ եղողները քաջ գիտեն։

Ճ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն

Ի տաճնացաւի համար վարպետ բը ժիշկին մէկը ազգ ու գեղ մը հնարեր է, որ Պէյ օղլու տէօրթ Եօլ աղլին Մօսկով սարային դիմացը Անթօնիօ անուն եղածին խանութը կը գըտնուի։

Իսկ գեղը տաճներու վնաս բերող ըսգօրփիթ ախտին ալ աւելի օգտակար ըլլալը՝ շատ անգամ փորձըված է մինչև այն աստիճան, որուն վրայով բոլոր Եվրոպայի օրագրերուն մէջ երկար գովեստներ գըրված է։

Իսկ գործածութեան կերպն ալ այս է. քանի որ ատամին ցաւը սկսի, աբեթի (խալի) մը կտոր այն դեղին մէջը Թաթիւելով՝ նոյն ատամին վրայ դընելու է, որ իսկոյն ցաւը ու սըղըն դադարեցնելով՝ բոլորովին կը բաւնայ նոյն ցաւը, որ անգամ մըն ալ չը պատահիր։ Եթէ ատամին լինտերուն մէջը ախտ կամ փտածութիւն մը գըտնուի, այն ժամանակը գաւաթի մը մէջ տաքուկ ջուր լեցունելով՝ յիշեալ դեղէն ալ 15 կաթիլէն մինչև 20 կաթիլ կաթեցնելու է, ու անանկ կաւկառաւ ընելու է։

Որովհետեւ արեան ապականութիւն գոյացած ըսգօրփիթ ախտը ներքին մարքերու դեղ խըմել կը հարկաւորի, նոյն պատճառաւ գաւաթով մը լեցուն ջուրին մէջը այս դեղէն 10 կաթիլ կաթեցնելով՝ առաւօտները անօթի փորանց խըմելու է։ Եւ նոյն ախտը բոլորովին փարատվելու համար՝ այս կերպով օրը երեքական կաթիլէն մինչև 30 կաթիլը աւելցնելով շարունակելու է։

Արշալիշեալ այս ազգ ու գեղը՝ ոչ միայն ատամի ցաւերը բժշկող, այլև ըսգօրփիթ ախտին ալ յատկապէս զօրեղ դեղ մի է։

